



**ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ**  
**NATIONAL SUPREME COUNCIL OF THE ARMENIANS OF WESTERN ARMENIA**  
**НАЦИОНАЛЬНЫЙ ВЕРХОВНЫЙ СОВЕТ АРМЯН ЗАПАДНОЙ АРМЕНИИ**  
**المجلس الوطني الأعلى لأرمن أرمينيا الغربية**

## **ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

### **Արեւմտեան Հայաստանի ազատագրման հիմնախնդիրէն՝ հայութիւնը այլեւս իրաւունք չունի խուսափելու**

Արցախեան երկրորդ պատերազմի հիմնական վերնագիրը պարզուեցաւ: Ան Պանթուրանիզմի գործնական իրագործման մեկնարկն էր:

Պանթուրանիզմը, "բարեբախտաբար" կը սպառնայ ոչ միայն հայութեան գոյատեւումին, այլ նաեւ շարք մը պետութիւններու եւ ազգերու ազգային անվտանգութեան, յատկապէս Ռուսաստանի Դաշնութեան, Չինաստանի, Հնդկաստանի եւ Պարսկաստանի, առաւել եւս Սուրիոյ, Իրաքի եւ ողջ միջին արեւելքի ճակատագիրին:

Պանթուրանիզմը թրքական ծրագիր մը չէ, այլ միջազգային ծաւալապաշտ համակարգի գերագոյն նպատակներէն մէկն է, երկրագունդին վրայ միաբեւեռ եւ մենատիրական իշխանութիւն մը հաստատելու նպատակով: Արցախի ներկայ պատերազմը բացայայտեց նաեւ (արդէն յայտնի բայց թաքնուած) այդ ծրագիրի իսկական ղեկավարներու ինքնութիւնն ու հասցէն:

Պատերազմը չէ աւարտուած, այլ ան նոր սկսաւ: Իսկ ընտրութիւններու եւ դիրքորոշումներու դաշտերը դարձան խիստ սահմանափակ, կամ պանթուրանիզմ՝ կամ խաղաղութիւն, կամ ալ սեւ կամ սպիտակ: Մոխրագոյնը վերացուած է այսօր:

Հայութիւնը ՊԱՐՏԱՒՈՐ է ամեն գնով տեղաւորուելու խաղաղութեան տանող խրամատին մէջ: ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ը գիտակցելով որ Արեւմտեան Հայաստանի ազատագրումն ու խաղաղասէր ու տարածաշրջանի այլ ազգերուն եւ պետութիւններուն հետ համահունչ ու ներդաշնակ հիմքերու վրայ հայկական անկախ պետութեան մը ստեղծումը արմատական եւ կեանք ունեցող միակ լուծումն է՝ կատարած է իր յստակ դիրքորոշումը միանալու խաղաղութեան ձգտող կողմին:

Պանթուրիզմի սպառնալիքին դէմ պայքարող վերոյիշեալ պետութիւնները՝ հայ ազգի բնական դաշնակիցներն են, որոնց հետ մեր համագործակցութիւնը պիտի ըլլայ անկեղծ, անխախտ եւ ռազմավարական սկզբունքային երկարատեւ հիմքերու վրայ:

**ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի**  
**հիմնադիր եւ նախաձեռնող մարմին**  
15 Նոյեմբեր 2020